ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՀՈՒԶԱԿԱՄԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Հ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Ընտանիքը սոցիալական կազմավորում է՝ կենսատարածքի, բնաշխարհի, ներխմբային գործընթացների առանձնահատկություններով, որոնք մեծ ազդեցություն ունեն ընտանիքում մեծացող երեխայի ճանաչողական հետաքրքրությունների և հուզակամային ոլորտի վրա։ Ընտանիքին բնորոշ են ճանաչողական, զարգացնող, սոցիալականացնող, տեղեկատվական, արժեքային, վարքի կարգավորման, դաստիարակչական, հաղորդակցման և այլ գործառույթներ։ Ճանաչողական գործառույթի շնորհիվ ավագ սերնդի աշխարհաճանաչողության փորձը, կենսական պատկերացումները, նորմերը հաղորդվում են հաջորդ սերնդին։

Վաղ տարիքից սկսած՝ երեխան սկսում է ճանաչել շրջապատող աշխարհը, մարդկային փոխհարաբերությունները, ձեռք է բերում սոցիալական փորձ, պատկերացում կազմում բարու, չարի, կենսական արժեքների մասին. այն, ինչ երեխան ընտանիքում յուրացնում է մանուկ հասակում, պահպանվում է ամբողջ կյանքում և դրսևորվում կենսական տարբեր իրավիճակներում։ Ղ. Աղայանը գրում է. «Երեխան կյանքի մեջ մտնելուն պես նորան մի առաջնորդող պետք է, բայց ոչ կույր առաջնորդ, այլ երեխայական բնությանը քաջահմուտ և զավակասեր մի ծնող, որ հոգուտ յուր մանկան առաքինության՝ զսպի յուր ընտանեկան գայթակղեցուցիչ կիրքերը և բազմակերպ նյութերով զարգացնե երեխայի քնքուշ զգացումը առաքինության մեջ» [1, 60]։

Ճանաչողական ակտիվությունն ի ծնե չէ, ձևավորվում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում։ Ճանաչողական ակտիվության հիմքը դրվում է ընտանիքում՝ երեխայի ստեղծագործական գործունեության փորձի, ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների վրա։ «Ճանաչողական կարողությունները ճանաչողության աղբյուրներն են, ճանաչողության բնական միջոցները, որոնք մարդու անհատական հատկանիշներն են։ Ճանաչողական կարողությունների թվում են զգայությունները, պատկերացումները, ընկալումները, բանականությունը, կամքը, ինտելեկտը, տաղանդը, ներըմբռնումը, հիշողությունը, երևակայությունը, ինդուկցիան, դեդուկցիան, համանմանումը, վերլուծությունը, համադրումը» [2, 420]։ Դեռևս վաղ տարիքից երեխայի ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստում են ընտանեկան կենսամիջավայրը, շրջապատող առարկաները, միջանձնային

փոխհարաբերություններն ու մեծահասակների զբաղվածությունը: Ուստի հաճախ երաժիշտների ընտանիքում առավել վառ է դրսևորվում հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ, բժիշկների ընտանիքում երեխաներն առավել հաճախ են ընտրում բժշկի մասնագիտությունը, որևէ արհեստի տիրապետող ընտանիքում երեխան շարունակում է ծնողի մասնագիտությունը: Դա բացատրվում է ոչ միայն գենետիկ նախադրյալներով, այլև ընտանեկան կենսամիջավայրի բաղադրիչներով:

Վաղ մանկական տարիքից սկսած, պայմանավորված նախնական տպավորման երևույթով /իմպրիտինգ/, հուզական կապ է ստեղծվում ոչ միայն երեխայի և ծնողի, այլև բնակավայրի, կենդանական և բուսական աշխարհի միջև: Ընտանեկան կենսամիջավայրի հետ զգայական կապը հիմք է դնում աշխարհընկալման և ճանաչողության: Երեխայի ճանաչողական և հուզակամային ոլորտների վրա մեծ ազդեցություն են ունենում մանկական տարիքում ստացած տպավորությունները, բնության ձայները, զրույցներն ու մայրական երգերը: Ա. Նալչաջյանը գրում է. «Ցանկացած կենդանու, ինչպես նաև մարդու օնտոգենետիկական զարգացման և վարքի առանձնահատկությունների ըմբռնման համար կարևոր նշանակություն ունի այն, թե ինչպիսին է նրա կյանքի առաջին փորձը, …միջավայրի ինչպիսի ներգործությունների է ենթարկվել» [3 , 114]:

Երեխայի ճանաչողական և հուզակամային ոլորտների զարգացման գործում մեծ ազդեցություն ունեն ընտանեկան ավանդույթները, միջսերնդային, ներընտանեկան փոխհարաբերությունները, ընտանիքի պատմությունը և դրա բովանդակությունը կազմող իրերը, մասունքները, խորհրդանիշները, տան կահավորանքը, խոհանոցային մշակույթը, բառապաշարը, խոսքային կառույցները, արտահայտչամիջոցները, ծնողի կամ մեծահասակի պահվածքը, սաստում, ոգևորում կամ արհամարհանք արտահայտող հայացքը, ժպիտը, ժեստերը: Ունենալով սոցիալ-հոգեբանական արժեք՝ դրանք ձևավորում են երեխայի նախնական տպավորությունները՝ հոգետրամաբանական ներգործություն ունենալով նրա ներաշխարհում, միաժամանակ ձևավորելով հարաբերությունները սոցիումում: Դրա ճանաչողական նշանակությունն արտահայտվում է նրանով, որ երեխան ընտանեկան առարկաների, արարողությունների և ներընտանեկան փոխհարաբերությունների միջոցով յուրացնում է համատեղ կենսագործունեության, ընտանիքում սոցիալական դերաբաշխման փորձ, իր սեռին բնորոշ պարտականություններ, հաղորդակցման մշակույթ, անձնային որակներ:

Մայրենի լեզվի միջոցով հաղորդվող տեղեկույթը ճանաչողական մեծ ներուժ ունի, խտացնում է ժողովրդի աշխարհաճանաչողական բազմադարյան կենսափորձը: Լեզուն կուտակում, պահպանում, իր իմաստաբանական տարածքում պատմականորեն ժառանգում և

փոխանցում է ճանաչողական ներուժ ունեցող նորմեր, բարոյական, ուսուցողական, դաստիարակչական բնույթ ունեցող խրատներ, ասույթներ: Հատկապես հուզական ազդեցություն ունեն օրորոցային երգերը, որոնց մեծ մասն ունի սյուժետային հյուսվածք, մտահուզական, տեղեկատվական իմաստ. դրանցում մայրը խոր զգացմունքայնությամբ պատմում է ընտանեկան առօրյայի, աշխատանքի, բնության երևույթների, շրջապատող աշխարհի մասին՝ ձևավորելով երեխայի հոգեբանական նկարագիրը և վաղ աշխարհաճանաչողությունը: Անշուշտ, երեխան դեռ չի ընկալում երգի բառերը, իմաստը, սակայն այդ երգերն իրենց հուզական բնույթով ու մեղեդայնությամբ էթնիկական սիմվոլացման, կայուն կառույցներով ու բանաձևերով հիշողության մեջ ամրակայման, էթնոհոգեբանական և էթնոնույնականացման յուրահատուկ համակարգ են, ընտանեկան և հասարակական արժեհամակարգերից բխող գործունեության ծրագիր:

Խոսքը սոցիալական երևույթ է. խոսքային միջոցներով են երեխաներին փոխանցվում մտածողության և վարքի մոդելները, թույլատրելիի և անթույլատրելիի նորմերը, արժեքները՝ ճանաչողական և հուզակամային ազդեցություններով: Էթնոլեզվաբանության ոլորտում արված հետազոտությունները ցույց են տալիս, որ խրախուսանք, սաստում, պարտադրանք, արգելք, հորդոր, նախատինք, հանդիմանություն արտահայտող կառույցները, որոնք ազդում են մտածողության ու վարքային դրսևորումների վրա, ծնողներից երեխաներին են փոխանցվում համապատասխան բառապաշարով, շարահյուսական կառույցների, ինչպես նաև հարալեզվական և ոչխոսքային միջոցներով: Վարքի կարգավորման ավտորիտար ոճը (ժխտական նախադասություններ, ժխտողական, պատժող և արգելող միջոցներ, ժխտական և հարկադրական քերականական կառույցներ՝ չի կարելի, պետք է, ստիպված ես, պարտավոր ես և այլն) ճանաչողական և հուզական-հոգեբանական մեծ ազդեցություն են ունենում երեխայի վրա:

Խոսքային միջոցներով երեխայի հուզակամային ոլորտի վրա ընտանիքի ազդեցության առումով հետաքրքիր է Գ. Կրայգի մոտեցումը, ըստ որի՝ ճանաչողական կարողությունների զարգացումը դիտարկվում է էթնոմշակութային տարբերությունների համատեքստում: Ըստ նրա՝ գերմանացի ծնողներին հատուկ է իրենց երեխաների հետ տիրական, առարկություններ չհանդուրժող տոնով խոսելը, մինչդեռ ամերիկացի ծնողներն ամենից առաջ ձգտում են բավարարել երեխաների ցանկություններն ու պահանջները: Այդ միտումների հիմքում ընկած սոցիալական արժեքները մասամբ փոխանցվում են մոդալ /եղանակավորող՝ պետք է, հարկ է/ բայերի միջոցով [4, 384]:

Ընտանիքում երեխայի ճանաչողական գործունեության կազմակերպումը պետք է հիմնվի առաջին հերթին մեծահասակների հետ հաղորդակցման պահանջմունքի վրա, որը զարգանում

է երեխայի արարքների, գործողությունների, դատողությունների, մտքերի համարժեք, անկողմնակալ գնահատման, ինքնուրույնության, ինքնագնահատման խրախուսման հիման վրա: Ճանաչողական հետաքրքրությունների զարգացման առումով կարևոր է հոգ տանել երեխայի մեջ աշխատասիրության, գործողությունների համակարգվածության, երևակայության, ուշադրության կենտրոնացման, ընկալման, հուզական վերաբերմունքի, գնահատողական դատողությունների, սկսած գործն ավարտին հասցնելու, պատասխանատվության, պարտաճանաչության, ստեղծագործական մոտեցման, նախաձեռնողականության, ինքնուրույնության և այլ հատկանիշների զարգացման ուղղությամբ: Երեխայի հարցասիրության խթանումը, նույնիսկ կենցաղային պայմաններում հետազոտական տարրական գործունեությունն ու փորձերը երեխային հնարավորություն են տալիս ինքնուրույն հայտնաբերել առարկաների ու երևույթների հատկանիշները՝ խթանելով ճանաչողական կարողությունների զարգացումը: Կարևոր է երեխայի մեջ զարգացնել համեմատելու, հակադրելու, դասակարգելու, գլխավորը երկրորդականից տարանջատելու, ըստ հատկանիշների խմբավորելու, պատճառահետևանքային կապերն ընկալելու, ընդհանրացնելու, դատողություններ անելու, իր գործողություններն ու աշխատանքը գնահատելու, ներկայացնելու, բնութագրելու կարողություններ:

Ճանաչողական ոլորտի վրա ծնողների ազդեցությունը կարող է լինել դրական, չեզոք, բացասական, ավտորիտար, ընդսմին պետք է անպայման հաշվի առնել հուզակամային ոլորտի վրա ազդեցության հնարավոր հետևանքները: Դրական մոտեցման դեպքում ծնողները խրախուսում են երեխայի իմացական զարգացումը, ուրախանում են նրա հաջողություններով և ստեղծագործական ակտիվությամբ: Ավտորիտար մոտեցումը դրսևորվում է երեխայի վարքի, իմացական և սոցիալական դրսևորումների նկատմամբ չափից դուրս ուշադրությամբ, գերպահանջկոտությամբ, որն ազդում է նաև հուզակամային ոլորտի վրա: Արտադպրոցական տարբեր հաստատություններում զբաղվածությունն ու ծանրաբեռնվածությունը երեխային զրկում են խաղերից, զբոսանքներից, ժամանցից, հասակակիցների հետ շփումից: Արդյունքում երեխայի ճանաչողական հետաքրքրությունները նվազում են. նա հաճախ իրեն համարում է անհաջողակ, մեծերի պահանջներին չհամապատասխանող, նվազում է ինքնագնահատականը, ի հայտ են գալիս տագնապայնություն, հիվանդագին զգացումներ, ագրեսիվություն, անտարբերություն: Ծնողների ցուցադրական դժգոհությունը, երեխայի ապագայով մտահոգ կերպարն ու գերխնամքը, երեխային ուրիշների հետ համեմատելն ավելի է վատթարացնում վիճակը: Իրականում երեխան դառնում է ծնողների ինքնահաստատման, ինքնասիրության և պատվախնդրության /ամբիցիաների/ բավարարման միջոց, քանի որ նրանց համար կարևոր է ցուցադրել երեխայի նվաճումները՝ առանց հաշվի առնելու նրա

ցանկությունները, երազանքները, մտքերը, հետաքրքրությունները, հակումները, ինքնազգացողությունը, հուզական և ֆիզիկական վիճակը, ապրումները, լարվածությունը:

Դեռևս վաղ տարիքում երեխան ձգտում է անել այն ամենը, ինչ պահանջում է ծնողը՝ նրան գոհացնելու, հավանության, խրախուսանքի արժանանալու համար: Այնուհանդերձ այս հաջողությունները հարաբերական են. հաճախ դա անբարենպաստ է անդրադառնում երեխայի ինքնուրույնության, ստեղծագործական կարողությունների դրսևորման վրա: Չափազանց վերահսկողությունը, բարձր պահանջները, անհատականության անտեսումը մեծ մասամբ խոչընդոտում են երևակայության և ինքնուրույնության զարգացումը: Բացի այդ, ձգտելով սիրո արժանանանալ մերձավորների շրջանում, երեխան կանգ չի առնում միջոցների առջև. նա կարող է խորամանկության դիմել՝ անազնիվ միջոցներով վաստակելու գովասանքը, այսինքն՝ կարող է թույլ տալ բարոյական բնույթի խախտումներ: Հուզակամային առումով դա կարող է արտահայտվել նրանով, որ երեխան աստիճանաբար վերաիմաստավորում է ծնողների կողմից ընդունելի և պարտադրվող արժեքները և կառուցում է իր սեփական արժեքային մոտեցումները: Օրինակ՝ ցածր դասարաններում բարձր առաջադիմություն ունեցող երեխաները հետագայում լավ չեն սովորում, կոնֆլիկտ են ունենում ծնողների հետ: Մեծանալով՝ նրանք չեն ձերբազատվում իրենց մանկական տհաճ հիշողություններից՝ ցավով նշելով, որ ծնողներն իրենց չեն ընդունել որպես անձ, իրենց մեջ տեսել են միայն ընդունակություններն ու նվաճումները:

Չբացառելով մեծահասակի մասնակցությունը երեխայի ճանաչողական գործունեության ընթացքում՝ պետք է առաջնայնությունը տալ նրա հմուտ, նուրբ ղեկավարմանը, երեխայի ճանաչողական կարողությունների ցանկալի դրսևորման համար ընտրված ներգործությունների համալիրին՝ ցուցումների, պահանջների, հրահանգների ճիշտ ընտրությամբ, որում առաջնահերթ են հարգանքը երեխայի անձի նկատմամբ, պարտադրանքի, մյուսների հետ համեմատելու բացառումը, յուրաքանչյուր ձեռքբերում խրախուսելը, կամավորությունը, երեխայի հուզազգայական ոլորտի առանձնահատկությունները հաշվի առնելը, իրավիճակային հետաքրքրություններից աստիճանաբար ճանաչողական կայուն հետաքրքրություններ ձևավորելը, երկխոսությունն ու հաղորդակցումը, որպեսզի չճնշվեն երեխայի նախաձեռնությունը, աշխարհը բացահայտելու խանդավառությունը:

Յուրաքանչյուր երեխա անհատականություն է՝ իր նուրբ ու զգայուն ներաշխարհով, աշխարհը բացահայտելու տաղանդով ու առաքելությամբ, ուստի ընտանիքում նրա հետ փոխհարաբերություններում ցանկալի է հիշել հետևյալը.

- Երեխային ինքնաբուխ դրսևորման, ինքնուրույնության հնարավորությու՛ն ընձեռեք,

խուսափե՛ք պատրաստի պատասխաններ և լուծումներ հրամցնելուց:

- Հավատացե՛ք երեխայի ներքին հնարավորություններին, ներըմբռնման կարողությանը, վստահե՛ք, հարգալի՛ց եղեք և հաղորդակցվե՛ք: Ուրախացե՛ք նրա հաջողություններով, անկեղծ զարմացե՛ք, հավա՛տ ներշնչեք իր ուժերի նկատմամբ:
- Մի՛ մեղադրեք և ամոթանք մի՛ տվեք ո՛չ մենակ, ո՛չ ուրիշների ներկայությամբ: Երեխան պետք է համոզված լինի, որ իր ֆիզիկական, հուզական, իմացական և ստեղծագործական պահանջմունքները դրական արձագանք են գտնում ընտանիքում:
- Լսե՛ք երեխաներին և ոգեշնչե՛ք, եղե՛ք բնական ու անկեղծ, մի՛ անտեսեք ու արհամարհեք նրանց երևակայությունը. դրանում է ամփոփված ապագայի տեսլականը: Օգնե՛ք նրանց այնպիսի ընտրություն կատարել, որը մարդկությանը կտանի հոգևորի, խաղաղության, համակեցության, առաջադիմության և ներդաշնակության ուղիով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր 4, -Եր.: «Հայպետհրատ», 1963, -684 էջ:
2. *Словарь философских терминов / научная редакция профессора.* В. *Г. Кузнецова. - М.: ИНФРА-М, 2007.* - 731 с. Эл. источник: http://ponjatija.ru/node/712. 20. 05. 2020.
3. Նալչաջյան Ա.Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, -Եր.: Լույս, 1991, -512:
4. Крайг, Грэйс Психология развития / Грэйс Крайг, Дон Бокум: науч. ред. пер. Т. В. Прохоренко. - 9-е изд. - Санкт-Петербург: Питер, 2018. - 939 с.

THE INFLUENCE OF THE FAMILY ON THE DEVELOPMENT OF THE COGNITIVE AND EMOTIONAL-WILL SPHERE OF THE CHILD

The family is a complex and multifunctional system that performs a number of interrelated functions. The article examines the functions of family education, associated with the influence of the family on the development of the cognitive and emotional-volitional sphere of the child. Questions about the need to search for new approaches, principles, forms, methods and means in the system of family education have been analyzed.

Keywords: *child, upbringing, cognitive activity, behavior, social environment, emotions, conflict, need*